

ՄԵԼՔԻՍԵԹ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԺԱՆԵՑԻՆ ԵՒ ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ, 1631 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ԽԱԶԻԿ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

«... Աղաչեմք զծեզ, եղբարք, ճանաչել զվաս-
դակաւորս և զվերակացուս չեր....»

Ա. Թեսաղնիկեցիս, Ե. 12:

1996 թուականի վերջին ամիսների ընթացքում լրացաւ հոգեւոր ու
մշակութային կեանքում մեծ երախտիք ունեցող մտաւորական, սուրբ
գրոց նուիրեալ, «արտաքին գրոց» մասնագէտ, մինչեւ այժմ ըստ պատ-
շաճի չգնահատուած մանկավարժ, կուսակրօն հոգեւորական Մելքիսէթ
վարդապետ Վժանեցու մահուան 365 ամեակը:

Մեր այս նախաձեռնութեան համար շարժառիթ է դարձել ո՛չ միայն
այս գիտութեան նուիրեալի, պատկառանք ազդող ու գնահատման ար-
ժանի վանականի երախտիքի գրահատանքը, այլև այն հանգամանքը, որ
նրա անձն ու գործը անուշադրութեան հետեւանքով ստուերի մէջ են մնա-
ցել մեր հոգեւոր ու մշակութային կեանքի պատմութեան մէջ: Կայ մի
երրորդ կարեւոր շարժառիթ եւս: Հայերէն Աստուածաշնչի երախտաւոր
հրատարակիչ Ոսկան Երեւանցու նախասրութիւնների արմատաւորման
մէջ, նրա նուիրումի, գիտելիքների ու ձեռնարկումների արգասաւորման
գործում մեծ բաժին ու վաստակ ունի այս կուսակրօն վանականը:

Մելքիսէթ վարդապետ Վժանեցին, ըստ ո՛չ ստոյգ տեղեկութեան,
ծնուել է 1570ական թուականի վերջերին Մեծ Հայքի Արարատեան նա-
հանգի Արագածոտն գաւառի Վժան գիւղում³:

Պատանի Մելքիսէթը նախական կրթութիւնը՝ գրաճանաչութիւնը,
ամենայն հաւանականութեամբ ստացել է իրենց գիւղում, ծխական քա-
հանայի մօտ: Երիտասարդ տարիքում ունենալով արեղայի կոչում², 1617—
1619 թուականների ընթացքում նա մեկնում է Բիթլիս եւ Ամիրդոլի վան-
քում դառնում է Բարսեղ վարդապետի առաջնորդութեամբ ղեկավար-
ող միաբանութեան անդամ: Որոշ ժամանակ անց նա աշակերտում է

Ներսէս վարդապետ Մոկացու գլխաւորած Մեծ Անապատ կոչուող մենաստանի դպրոցին: Եւ ապա, գրում է. «... եւ յորժամ ելեալ Ներսէս վարդապետն զնաց յերկիրն Վասպուրականի ի Լիմ կոչեցեալ կղզին, ... այս տէր Մելքիսէթս եւս գնաց ընդ Ներսէս վարդապետին ի Լիմ»³:

Կարճ ժամանակ անց Լիմ անապատում մեծանում է միաբանների քանակը եւ վանահայր Ներսէս վարդապետ Մոկացու գլխաւորած մենաստանում լայնածաւալ առումով ընթացք են ստանում փիլիսոփայութեանը վերաբերուող մատեանների ձեռքբերման ու ընդօրինակման աշխատանքները: Այսուհետեւ ընդարձակուում են այդտեղ իրականացուող ուսուցման սահմանները: Հիմնաւորուում է «արտաքին գիտութեան» առարկաների՝ քերականութեան, տրամաբանութեան, փիլիսոփայութեան ու տոմարագիտութեան ուսումնասիրութիւնը: Դասընթացին գուգահեռ, այդ դպրոցում կիրառուում է մի իւրօրինակ մօտեցում: Ամէն օր մի որոշեալ ժամի, ուսուցման ըոլոր մասնակիցները հաւաքուում եւ քննարկման են ենթարկում իրենց կարդացած մատեաններում տեղ գտած եւ մութը մնացած հարցերը: Տեսակէտերի փոխանակման ու հարցերի պարզաբանման միջոցով կատարում են անհասկանալի մնացած մտքերի մեկնարանութիւնները, եւ գիտելիքների իմացութիւնը բոլորի համար դառնում է մատչելի: Որոշ ժամանակ անց ուսուցմանը մասնակցող միաբաններից ոմանք ցըւում են. «Բայց տէր Մելքիսէթ՝ ոչ եթող զարտաքին գիրքն, եւ ոչ թուլացաւ ի նորին ընթերցմանէ, այլ անդադար տքնութեամբ զայդ եւ զցերեկ ընթեռնոյր եւ մտածէր, եւ բերեալ առ Ներսէս վարդապետն ցուցանէր, եւ հարցանէր թերեւս ուղիղ իցէ գտեալ բան»⁴:

Բացառիկ յամառութեամբ ու նուիրումով այս Վժանեցի վանականը տասից—տասներկու տարի ապրում եւ տքնում է Լիմ անապատում, հետեւողականօրէն զբաղուում է «արտաքին գրոց» առարկաների ուսումնասիրութեամբ եւ ամբարում է պատկառելի չափի հասնող գիտելիքների պաշար: Նրա ուսումնասիրած գրքերի ցանկում Առաքել Դաւրիթեցին թուարկում է Դաւիթ Անյաղթի Սահմանք իմաստասիրութեան գիրքը, Մովսէս Խորենացու Գիրք աշխարհացը, յոյն փիլիսոփաներ Պորփիրի եւ Արիստոտէլի հայերէն թարգմանութիւնները, նաեւ՝ «Այլ եւ զամենայն ազգաց տօմարն՝ որոց պատճէն գրեալ կայի միջին մերում, քաջ եւ անտարակոյս եհաս ամենայնի, գիտելով զսկիզբն եւ զպատճառն եւ զամենայն հետեմունս նոցա: Այլեւ քերականութեան գիտութեան եղեւ տեղեակ եւ գիտող առաւել քան որք էին ի ժամանակին»⁵:

Վժանեցու արժանիքները աննկատ չեն մնում Լիմ անապատում նրան շրջապատող մարդկանց համար: «Եւ ի կատարել մարմնոց հասակին քան զոր առաւել կատարեալ էր իմաստութեան եւ հոգւոյ հասակն, կամովք իւրովք վարդապետն ներսէս եւ վկայութեամբ ամենայն եղբարց

անապատին, յառաջ կոչեաց զնա ի բարձրագոյն տեղի եւ ի պատիւ ըստ հրամանի Տեառն, ...եւ շնորհեաց նմա զգաւազան վարդապետութեան, որ յարաժամ քարոզութեամբ աղբերաբար իմաստութեան ջրով մխիթարեալ զովացուցանէր զլողսն»⁸:

1629 թուականի Յունուարի 13ին Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոս է օծուում Մովսէս վարդապետ Սիւնեցին: Թէ՛ դրանից առաջ իբրեւ Մայր Աթոռի լուսարար եւ թէ՛ օծուելուց յետոյ իբրեւ կաթողիկոս նա ձեռնարկում է շինարարական ու վերանորոգչական բնոյթի ծաւալուն աշխատանքներ: Եկեղեցիների վերանորոգումից բացի նա կառուցում է Մայր Աթոռի ժամատունը, պարիսպը, խցերն ու առաջնորդարանը: Հիմնադրում է վանական դպրոցը, գրչատունն ու գրապահոցը: Մովսէս կաթողիկոսի բարեկարգումների համբաւը Առաքել Դաւրիթեցու վկայութեամբ, «Հրատարակեալ էր ընդ ամենայն աշխարհ, առ որ ամենեքեան տենչացեալ գային ի տեսութիւն նոցին»⁹: Այդ աւետաբեր տեղեկութիւնները հասնում են նաեւ Լիմ անապատ եւ Մելքիսէթ վարդապետը թողնում է մենաստանը եւ գալիս է Էջմիածին:

Մայր Աթոռում Մելքիսէթ վարդապետ Վժանեցին չի արժանանում պատշաճ ուշադրութեան: Իր գիտելիքների համար փառաբանուած անձնաւորութիւնը մեծ հիասթափութիւն է ապրում նոր միջավայրում: Էջմիածնի վանականները նրան ոչ միայն չեն գնահատում, այլեւ չեն հասկանում նրա ամբարած գիտելիքների արժէքը: Դաւրիթեցուն յայտնի էր Էջմիածնի կրօնաւորների այս վերաբերմունքը, սակայն տեղեակ լինելով նրա հեղինակութեան յետագայ շրջադարձին, գնահատմանն ու պանծացմանը, այդ դրուագին, նա թերեւս գիտակցաբար չի անդրադարձելիր աշխատութեան մէջ: Ի տարբերութիւն Դաւրիթեցու, այս փաստին հանգամանօրէն անդրադարձել ու ինքնակենսագրականում ծաւալուն տեղ է յատկացրել Ոսկան Երեւանցին, որին կ'անդրադառնանք ստորեւ:

Այդ շրջանում Լվովի հայկական համայնքի հոգեւոր կեանքում տեղի ունեցած դէպքերի անցանկալի զարգացումները սերտորէն կապուած են Մելքիսէթ վարդապետ Վժանեցու գիտելիքների գնահատման հարցում տեղի ունեցած շրջադարձի հետ, ուստի անհրաժեշտ համարեցինք հարեւանցի անդրադառնալ նաեւ այդ իրադարձութիւնների շարադրմանը:

Շահ—Աբասի մահուանից յետոյ գահ բարձրացած նրա թոռ Շահ—Սաֆիին շնորհաւորելու եւ Մելքիսէթ կաթողիկոսի կողմից Էջմիածնի վրայ բարդուած 100 թուաման պարտքի ինդիրը կարգաւորելու նպատակով 1629 թուականի սկզբներին Սպահան է մեկնում Ամենայն Հայոց կաթողիկոս Մովսէս Գ. Տաթեւացին: Նոյն թուականի աշնանը հայրենիք վերադառնութեամբ կաթողիկոսը հետ էջմիածնի բերում Խաչատուր Կեսարացու դպրոցի աշակերտ, տասնհինգամեայ աբեղայ Ղիճենց Ոսկանին:

Անսալով կաթողիկոս Մովսէս Տաթեւացու ցանկութեանը, Ղիճենց Ոսկանը Նոր Զուղայում կիսատէ թողնում իր ուսումը եւ գալիս է էջմիածին: Այստեղ նա հանդիպում եւ ծանօթութիւն է հաստատում Լիմ անապատից էջմիածին եկած Մելքիսէթ վարդապետ Վժանեցու հետ:

Հասկանալի է, որ նա կ'ուզենար այստեղ շարունակել իր կիսատ թողած ուսումը: Թւումէ թէ Ոսկանը պէտք է օգտուէր ընձեռուած պատեհութիւնից եւ դիմէր այդ գիտուն վարդապետի օգնութեանը, սակայն նա ընդունում է տրամաբանութեանը հակառակ մօտեցում: Էջմիածնում Ոսկանի ականջին էին հասել բաւականին աննպաստ տեղեկութիւններ Մելքիսէթ վարդապետի գիտութեան վերաբերեալ: Այս պարագայում երիտասարդ ու անփորձ Ոսկանը չէր կարող այլ կերպ վարուել, որովհետեւ գտնում էր էջմիածնի հոգեւորականութեան կողմից դրսեւորւած թերահաւատ վերաբերմունքի ազգեցութեան տակ: Այն, ինչ իր պատմութեան մէջ գիտակցաբար շրջանցել է Առաքել Դաւրիթեցին⁸, իր համար ոչ շահեկան մանրամասներով շարադրում է Ոսկան Երեւանցին 1669 թուականին Ամստերդամում իր հրատարակած Դաւրիթեցու Պատմութեանը կցած ինքնակենսագրականում: Նա գրում է. «... զմէլքիսէթ վարդ[ա]պ[ե]տն Վժանցի, զայր կորովի եւ բանիբուն, զգտօնն հանճարոյ բնար[ա]նակ[ա]նին մասնաւորաբար: ... Մանաւանդ զի առ ոչ ոք գոյր իմէջհայոց այն գիտութիւն: Եւեւս զի ամ[ենե]ք[ի]ն պարսաւօղք էին այնմ արհեստի, որք էին արք Երեւելիք, եւ թուեին թէ գոյ գիտութիւնը ի ն[ո]ս[ա]: Նա եւ էին ատեցօղք գիտութեան, եւ եպերօղք վեհազանցին այնմիկ. զ[ա]ս[ն] ոչ գոլոյ ինքնեանց հասու գիտութեան այնմիկ: մանաւանդ զի ոչ կարէին իսկ հասու լինիլ...»⁹:

Գտնուելով այս մտայնութեան ազգեցութեան տակ, ինչպէս ասացինք, «... Բայց սա [Ոսկանը – Խ.Ս.] զոյինչ փոյթ կալաւ յանձին հետեւիլ նմին. զի ինքն տղայէր հասակաւ, ... Եւ եւս զի ամ[ենե]ք[ի]ն պարսաւօղք էին այնմ արհեստի...»¹⁰:

Ոսկան Երեւանցու ի յայտ բերած մտայնութիւնը խմորւում էր էջմիածնում, Դաւրիթեցու աչքի առաջ, սակայն, ինչպէս ասացինք, այս փաստին վերջինս, գէթ մի բառով իսկ չի անդրադառնում իր Պատմութեան մէջ:

Լուր ստանալով Լովի հոգեւոր թեմում տիրող խառնակ կացութեան մասին, Մովսէս կաթողիկոսի յաջորդ քայլը լինում է էջմիածին կանչել Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի վանահայր, իր աշակերտ Խաչատուր վարդապետ Կեսարացուն: Տալով համապատասխան յանձնարարականներ, կաթողիկոսը Խաչատուր վարդապետին՝ նրա առաջադէմ աշակերտ Սիմոն Զուղայեցու ուղեկցութեամբ, 1630 թուականի սկզբին իբրև էջմիածնի առաքելական նուիրակ ուղարկում է Լովի:

Էջմիածնից մեկնած նուիրակի պատգամաւորութեանը ժողովրդի աչքում նսեմացնելու, նրա վրայ բարոյական ճնշում գործադրելու նպատակով, կաթողիկէ դարձած հայ կրօնաւորները կազմակերպում են մի իւրօրինակ հակաճառութիւն:

Մը ըրդղները Խաչատուը վարդապետ Կեսարացուն առաջարկում են պատասխանել. «Եւ ասացին՝ վարեմ բառս անո՞ւն է թէ բայց¹¹: Ոչ Խաչատուը Կեսարացին, եւ ոչ էլ Սիմոն Զուղայեցին կարողանում են պատասխանել այդ հարցադրմանը. «... եւ մերքն անհմուտ գոլով զայլ եւ այլ պատասխանիս ասէին. յայնժամ նոքա քամահրելով եւ ծիծաղելով այսն արարեալ են զմերովքն. եւ ի բազում աւուրս վասն հակաճառութեան այսպէս են արարեալ յայնժամ մերքն ի սիրտ եւ յոզի խոցեալք են. եւ իմացեալ թէ զայն, զոր գիտեն, ո՞չ է գիտութիւն, այլ պարտ է նոցա զարտաքին գիրքն կարդալ, եւ անդէն ի մտի եղեալ են հաստհատութեամբ, թէ զնամք յիշմիածին առ Մելքիսէթ վարդապետն, զայլ ամենայն ինչ թողեալ՝ արտաքին գիրքն կարդամք ի նմանէ»¹²:

Առանց հասնելու որեւէ զրական արդիւնքի, 1631 թուականի սկզբին Էջմիածին են վերադառնում Լվով մեկնած կաթողիկոսական նուիրակ Խաչատուը վարդապետ Կեսարացին եւ նրան ուղեկցող Սիմոն Զուղայեցին. Հասնելով տեղ նրանք անմիջապէս ձեռնամուխ են լինում իրենց նպատակի իրականացմանը: Էջմիածնի միաբանութեան անդամներից ոմանք միանալով նրանց, բոլորը միասին մեկնում են Երեւան եւ դիմելով Մելքիսէթ վարդապետին դառնում են նրա աշակերտները:

Կաթողիկոսական նուիրակի Լվովում կրած պարտութիւնը դառնում է շարժառիթ եւ 1631 թուականի Մարտի սկզբին, Երեւանում Ս. Անանիա առաքեալի մենաստանում (այժմ Զօրաւոր եկեղեցի) ծայր է առնում եւ պատմական իրողութիւն է դառնում Մելքիսէթ վարդապետ Վժանեցու դպրոցի գոյութիւնը: Նոյն օրուանից Մելքիսէթ վարդապետի վարած դասընթացին միւսների հետ մասնակից է դառնում նաեւ Երիտասարդ արեղայ Ղլիճենց Ռսկանը: Այս դպրոցի սկզբնաւորումով իրականութիւն է դառնում Մելքիսէթ վարդապետի տարիների ընթացքում իր կեանքի համար նպատակ դարձրած բաղձանքը: Երեւանում բացւած դպրոցը միջոց է դառնում, որ Վժանեցին մէկեւկէս տասնամեակի ընթացքում, յամառ տքնանքով ամբարած գիտելիքները եկող սերունդին յանձնելով արդիւնաւէտ «կացուցանի» իր նուիրումն ու տառապանքը:

Ուսուցման ընթացքին հետամուտ՝ Դաւրիթեցին անհրաժեշտ է համարել եւ արձանագրում է այդ դպրոցում աւանդուող առարկաների նաեւ հերթականութիւնը. նախ քերականութիւն, որից յետոյ պէտք է ենթադրել, որ Վժանեցու աշակերտները արդէն կարող էին պատասխանել Լվովեան հակաճառոցներին թէ ինչ խօսքի մաս է «վարեմ» բառը: Սակայն,

ՄԵԼՔԻՍԵԺ վարդապետը դրանով չի սահմանափակւում եւ որոշ ժամանակ անց իր աշակերտներին սկսում է աւանդել փիլիսոփայութիւն՝ այն, ինչ նա երկարածիգ տարիների ընթացքում սովորել էր Լիմ անապատում։ Հստ Դաւրիթեցու, այս առարկայի ուսուցումը սկսում է Դաւիթ Անյաղի Սահմանը իմաստասիրութեան գրքով, ապա նա քննութեան առարկայ է դարձնում յոյն փիլիսոփայ Պորֆիրի Վերլուծութիւն ներածութեանը¹³, է դարձնում յոյն փիլիսոփայ Պորֆիրի Վերլուծութիւն ներածութեանը, որին յաջորդում է Արիստոտէլի Կատեգորիաների մասին եւ Պերիարմենիասը (Գիրք քերականութեան մասին), որը հայերէն թարգմանուել է «Յաղագս մեկնութեան» վերնագրով։ Շարունակելով «դասառութիւնը», նրանք ուսումնասիրում են նաեւ Խորենացու Գիրք աշխարհացը եւ այլ աշխատութիւններ։ Փիլիսոփայական գրքերի դասաւանդումից բացի Մելքիսէժ Վժանեցին իր աշակերտներին ուսուցանում է նաեւ բոլոր ազգերի տոմարները։

«Եւ լինէր յորժամ Մելքիսէժ վարդապետն կանխէր ի դաս եւ ի քարոզ, իբրեւ զյորձանս ուղիսից եւ հեղեղաց ընթանացը բանն ի բերանոյ նորա, յորոյ իմաստութիւնն ամենեքեան ապուշ եղեալ՝ հիանային եւ բաղձային»¹⁴։

ՄԵԼՔԻՍԵԺ վարդապետի դասաւանդման ու դպրոցի համբաւը էջմիածնի վանականների միջավայրում առաջ է բերում մտայնութեան յեղաբեկում։ Էջմիածնի հոգեւորականների մի ստուար խումբ, որոնք երկու տարի առաջ թերահաւատ վերաբերմունք ու բացասական կարծիք ունէին Մելքիսէժ վարդապետի գիտելիքների հանդէպ, առաջարկով դիմում են Կաթողիկոս Մովսէս Տաթեւացուն եւ խնդրում են, որ նա կամ իրենց թոյլ տայ գնալու Երեւան Վժանեցու դասընթացին հետեւելու եւ կամ նրա դպրոցը տեղափոխի էջմիածնին, որպէսզի իրենք եւս ուսանեն նրա մօտ։ Էջմիածնի հոգեւորականների այս առաջարկի մէջ դժուար չէ նշարել Մելքիսէժ վարդապետի գիտելիքների վերագնահատման ու արթեքաւորման առհաւատչեան։

Մովսէս Տաթեւացին որոշում է ընդառաջել հոգեւորականների ցանկութեանը եւ 1631 թուականի Յուլիսի վերջերին Մելքիսէժ վարդապետի դպրոցը, աշակերտների մի մասի հետ, Երեւանից տեղափոխւում է էջմիածին¹⁵։ Այս միջոցառման հետեւանքով, շուրջ հինգ ամիս ուսանելուց յետոյ ընդհատուում է Ոսկան աբեղայի ուսումնառութիւնը Երեւանում։ Ոսկանի ինքնակենսագրականից յայտնի է դառնում, որ ընդհատման պատճառը կապուած է եղել Խաչատուր Կեսարացու ընդունած որոշման հետ։ Երբ վերջինս չի ցանկանում մեկնել էջմիածին, նրա երկու աշակերտներից մէկնումէկը պէտք է նրա հետ մնար Երեւանում։ Այս առիթով Միմոն Զուղայեցու եւ Ոսկան աբեղայի միջեւ տեղի է ունենում հետեւեալ խօսակցութիւնը։ «Տես տէր ոսկան, հարկ է միոյ՝ ի մէնջ մնալ աստ ընդ

վարդապետիս: այս գիտութիւնս եւս կարի հարկաւոր է մեզ՝ զի գնացեալ յապահան միմեանց ուսուսցուք: թէ դու զկամս ունիս ուսանելոյ՝ դու երթ: ես մնացից աստ’ի սպասաւորութիւն [ան] սորին: իսկ եթէ ոչ ունիս: ես երթաց՝ եւ դու աստ վարդ [ա]պ [ետ]ին սպասաւորեա: Սա եւս անտեղեակ գոլով հմտութեան [ա]ն, եւ տղայ հասակաւ. մանաւանդ գաւագութիւն [ան] շնորհելով սիմօնին, մնաց ինքն առ վարդ [ա]պ [ետ]ին յերեւան, իսկ սիմօնն գնաց ընդ մէկքիսէթին յէջմիածինն...»¹⁸:

Էջմիածնում դպրոց ունենալու պատեհութիւնը եւ աշակերտների թուակագմի աւելացումը գոհունակութիւն է պատճառում Լիմ անապատում վարդապետական գաւազան եւ պարտաւորութիւն ստանձնած նուիրեալին եւ նա իր սիրառ բացում է պատմաբանի¹⁷ առաջ ու վերջինս իր աշխատութեան մէջ, բարացիօրէն, մէջ է բերում նրա խօսքերը. «Ո՛չ այլ ինչ խոկումն կամ մտածութիւն գոյր ի սիրտս իմ, բայց միայն գասն իմաստութեանս այսմիկ զոր բազում եւ անժուելի չարակըութեամբ հազիւ թէ գտի, եւ այն եւս չնորհելովն Տեառն, երկնչէի թէ առանց ումեք ուսուցանելոյ մեռանէի, եւ այս պանծալի եւ չքնար գիտութիւնս ընդ իս ի հող մտեալ ամփոփիւր. բայց արդ՝ որովհետեւ դաս ասացի ձեզ, եւ զընկալեալն ի Տեառնէ զարծաթ բանին արկի ի սեղանաւորս, այսուհետեւ փոխանակ տրտմութեան՝ ունիմ միսիթարութիւն, զի թէպէտ ես մեռանիմ, այլ սերմանեալն առ ձեզ բան Տեառն մնայ յաշխարհի. եւ զոր ինչ ես յամս հնգետասան, եւ այլ աւելի, մեծաւ տաժանմամբ հազիւ թէ կարացի գտանել, արդ՝ հեշտ եւ դիւրին յամիսս ութ ձեզ լընձեռեցի: Բայց խնդրեմ ի ձէնջ եղբարք իմ սիրեցեալք ի Տէր, որպէս պատուիրեցին մեզ նախնի վարդապետքն մէր կտակ արարեալ եւ հարկ եղեալ ի վերայ մէր, նոցին նման եւ ես այսօր ձեզ պատուիրեմ, եւ զնոյն հարկ դնեմ ի վերայ ձեր, զի մի՛ թուլանայցէք՝ եւ մի տայցէք հանգիստ աչաց կամ նինջ արտեւանաց, այլ բուռն առեալ զշաւիդս իմաստութեանս այսմիկ, եւ յաւուրս կենաց ձերոց անդուլ եւ անդադար աշխատեցէք ի վերայ սորին մինչեւ ցօր վախճանի ձերոյ...»¹⁸:

Տեղափոխուելով էջմիածին եւ համալրելով աշակերտների կազմը, նոյն թուականի Օգոստոսի սկզբից Մելքիսէթ վարդապետը սկսում է իր դասաւանդութիւնը: Ըստ Սիմոն Զուղայեցու հաւաստիացման, այդ ընթացքում նրանք ուսանում են Պորփիրի Վերլուծութիւնը եւ «զստորդութիւն», [Արիստոտէլի], բայց «զ Պերիարմննիասն մինչեւ, ի տասնեւորս պըրակն»¹⁹:

Էջմիածնի դասաւանդման ընթացքում Մելքիսէթ վարդապետը Լիմ անապատում ունեցած «ծանրատար ճգնութիւնների» հետեւանքով սկսում է յաճախ հիւանդանալ: Հոկտեմբերի վերջերին առողջական վիճակի վատթարացման պատճառով ընդհատում են դասերը: Սիսալ բուժման

հետեւանքով առաջ են գալիս նոր բարդացումներ եւ 1631 թուականի Դեկտեմբերի սկզբներին, Երեւանում, նա վախճանւում է²⁰: Թաղումը տեղի է ունենում Կողեւն կոչուող գերեզմանատանը²¹, ուր պէտք է կարծ ժամանակ անց հանգչէր նաեւ երջանկայիշատակ կաթողիկոս Մովսէս Գ. Տաթեւացին:

Նոյն տարուայ Նոյեմբերի սկզբին Սպահանից պատուիրակութիւն է գալիս Էջմիածին խնդրելու Ամենայն Հայոց Կաթողիկոս Մովսէս Տաթեւացուն, որպէսզի նա իրենց համար թեմական առաջնորդ կարգի Խաչատուր վարդապետ Կեսարացուն:

Կաթողիկոսը յարգում է նրանց միջնորդութիւնը եւ նոյն օրերին Խաչատուր Կեսարացին իր հետ առնելով Ղիճենց Ոսկանին պատրաստում է մեկնել Նոր Ջուղա: Քանի որ Մելքիսէթ վարդապետի հիւանդութեան սաստկացման պատճառով Էջմիածնում դադարեցուել էին դասերը, Սիմոն Ջուղայեցին եւս միանում է նրանց եւ երեքով միասին մեկնում են Նոր Ջուղա:

Հասնելով Նոր Ջուղա, Խաչատուր Կեսարացին Ամենափրկիչ վանքում նոր հիմունքներով վերաբացում է նախկինում իր ունեցած դպրոցը: Դպրոցում նոր ու թարմ շունչ հաղորդուում աւանդուող առարկաներին: Սուրբ գրքի ու Հարանց Վարքի Կողքին նշանակալից տեղ է յատկացւում «արտաքին գիտութեան» առարկաների դասաւանդմանը: Այս հարցում որոշակի նշանակութիւն է ունեցել Երեւանում եւ Էջմիածնում Վժանեցու արգասաւրած գաղափարների մուտքը դպրոց: Ճիշդ է Վժանեցին այլեւս չկար, սակայն, Սպահանում էին նրա երեք աշակերտները, որոնց տնօրինութեան տակ էր դրուած դպրոցի գործում վիւթիւնը: Առանձին բարեբախտութիւն պէտք է համարել, որ այդ դպրոցում «դասաւութեան» ընթացք եւ ուղղութիւն տուողը հանդիսանում էր աչքի ընկնող ու բանիմաց հոգեւորական—մտաւորական Սիմոն վարդապետ Ջուղայեցին:

Ամենափրկիչ վանքի դպրոցում միւսների հետ, իր ուսումնառութիւնն էր շարունակում նաեւ Վժանեցու միւս աշակերտ արեղայ Ղիճենց Ոսկանը: Ըստ վերջինիս հետ Երեւանում ունեցած պայմանաւորութեան, Սիմոն Ջուղայեցին պէտք է Էջմիածնում իր ստացած գիտելիքները ուսուցման կարգով աւանդէր նրան: Այս փոխանցումը իրականացնելուց յետոյ նրանք սկսում են ուսումնասիրել Դաւիթ Անյաղթի Գիրք սահմանացն, ապա Պորփիրի Վերլուծութիւն ներածութեան ու Արիստոտէլի Պերիարմենիաս աշխատութիւնները²²:

* * *

Յօդուածի սկզբում մենք առիթ ունեցանք ասելու թէ ինչու պատա-

Նիու տղայամիտ Ոսկանը լինելով շրջապատի ազդեցութեան տակ, թերահաւատ վերաբերմունք է դրսեւորում Մելքիսէթ վարդապետի գիտութեան հանդէպ: Նաեւ նշեցինք, որ Լզովից վերադարձող պատուիրակների ընկերակցութեամբ Ոսկանը հինգ ամիս ուսանում է Վժանեցու Երեւանում հիմնադրած դպրոցում: Այնուհետեւ աշխատեցինք փաստարկել թէ ինչպէս Ոսկանի եւ նրա ընկերակիցների միջոցով արտաքին գիտութեան առարկաների դասաւանդումը մուտք է գործում Նոր Զուղայի դպրոցը եւ դառնում է ընդհանրացուած ուսուցում:

Այս ամէնից յետոյ հարկ ենք համարում ի յայտ բերել թէ ինչպէս հասունութեան տարիի գումար, այդ ամէնից չորս տասնամեակ անց, ազգութեան մէջ երկրորդ թարգմանիչ համարուող Ոսկան Երեւանցին վերանայում ու արժեքաւորում է իր ուսուցչի հանդէպ՝ երիտասարդութեան շրջանում ունեցած յոռի ու անպատեհ տեսակէտերը:

1668 թուականին, երբ Ոսկան Երեւանցին Ամսստերդամում տպագրութեան էր նախապատրաստում Դաւրիթեցու Գիրք պատմութեանց խորագրով աշխատութիւնը, ծանօթանալով գրքի իթ. գլխում զետեղւած Մելքիսէթ վարդապետի կենսագրութեանն ու կտակին, անհրաժեշտ է համարում այդ աշխատութեան վերջում, էջ 629ին, զետեղելիը միքանի էջից բաղկացած «Պատմութիւն» կենաց Ոսկանայ Վարդապետի Երեւանեցւոյ տպագրողի գրոյն՝ եւ այլոց» վերնագրով ինքնակենսագրականը: Նախ ասենք, որ իր այդ ոչ մեծ ծաւալ ունեցող գրութեան շուրջ մէկ քառորդը Ոսկանը նուիրում է Վժանեցու հետ կապուած այն իրադարձութիւնների լուսաբանմանը, որոնք շրջանցուել էին Դաւրիթեցու աշխատութեան մէջ եւ ապա այլեւայլ պարզաբանումների հետ մէկտեղ անդրադառնում է նաեւ Վժանեցու ուսմունքի գնահատմանն ու վերաբերեքաւորմանը²³: Նախ ասենք, որ Ոսկան Երեւանցին բարձր է գնահատում Մելքիսէթ վարդապետի ամբարած գիտելիքների պաշարն ու բերած նորութիւնը գիտութեան բանականացման գործում, «... զայր կորովի եւ բանիբուն, — գրում է նա եւ ապա աւելացնում է, — զգտօղն հանճարոյ բնաբանականին մասնաւորաբարը»:²⁴ Բնութագրմանը տալով նման ձեւակերպում Ոսկան Երեւանցին իր ուսուցչի մօտեցման մէջ առկայ է դարձնում միջնադարեան կարծրացած, վերացական մտայնութիւնը շրջանցելու միտում եւ ապա նրա տուած կրթութեան մէջի յայտ է բերում բնաբանական (բնական) գիտութեան հանդէպ դրական հակումի դրսեւորում, ինչը պէտք է համարել Ոսկան Երեւանցու վերագնահատման ու արժեքաւորման կարեւորութիւնը ընդգծող չափանիշ:

Երախտապարտ աշակերտը հասունացման տարիքում ոչ միայն «լուսաւոր եւ աստուածապարգել» է համարում Մելքիսէթ վարդապետի տիրապետած գիտութիւնը, այլեւ գործնականում առարկայական է

դարձնում իր գիտարկումը: Առանց այդ գիտութեան, պարզաբանում է նա «...անհնար է մարդկան զիր ինչ ճշմարտապէս իմանալ՝ եւ զբառս Ա[ստուա]ծաշնչոց գրոց ուղղակի բացատրել»²⁵:

Ցիշեցման կարգով պէտք է կրկնեսք, որ այս խօսքերը պատկանում են այդ նոյն օրերում Աստուածաշնչի հրատարակութիւնը խմբագրող եւ տպագրութիւնը իրականացնող Ոսկան Երեւանցուն:

Հիմքեր կան ասելու, որ Ոսկան Երեւանցու ձեռնարկած հրատարական առաքելութեան, այդ գործում նրա հանդէս բերած անմնացորդ նույրման եւ Մելքիսէթ վարդապետի կտակում առաջադրուած խնդիրների միջեւ կան շփման եզրեր: Այստեղ այդ փաստերի արծարծումը կարող է մեզ հեռունելոց տանել, սակայն, եթէ ցանկանանք աղերսներ որոնել, ապա կարող ենք զուգահեռներ յայտնաբերել Ոսկան Երեւանցու հանդէս բերած առաքելութեան եւ կտակի մէջ Մելքիսէթ վարդապետի կողմից իրեն աշակերտած հետնորդներին պատգամ թողած յանձնարարականի միջեւ:

Մի գիտարկում եւս...

Երկու տարի եւ մէկ ամիս Երեւանում ապրելու եւ այդ ընթացքում շուրջ հինգ ամիս Ս. Անանիայի անապատում ուսանելու հանգամանքը կեանք մտնող Ղիճենց Ոսկանին իրաւունք է տալիս իր անուանը յարակցելու Երեւանցի մականունը, որը նրա անուանը ուղեկցում է ապրած կեանքի յետագայ բոլոր տարիների ընթացքում: Իսկ երբ նա իրականութիւն է դարձնում երկար ու ձիգ տարիներ իշմիածնի մտահոգութեան առարկան համարուղ Աստուածաշունչ մատեանի տպագրութիւնը, նրա անունն ու մականունը միասնութեան մէջ փառահեղ պանծացումով յաւերօրէն ամրագրում են նաև հայ ժողովրդի հոգեւոր ու մշակութային կեանքի պատմութեան ու տարեգրութեան մէջ: Ոսկանը գիտակցուած առաքելութեամբ է նույրում աստանղական կեանքին եւ նույրումով էլ կնքում է իր մահկանացուն հայրենիքից հեռու:

Ոսկան Երեւանցու օտար աիերում ձեռնարկած առաքելութիւնն ու անմնացորդ նույրումը, նրա կատարած գործի դարակազմիկ նշանակութիւնը, նրան դուրս են մղում իր ապրած օրերի նեղ շրջանակներից ու տարածութեան սահմաններից եւ պատուաւոր տեղ յատկացնում մեր հոգեւոր ու մշակութային կեանքի 1700ամեայ պատմութեան մէջ, մեծ ու փառաբանուած անհատների շարքում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Այժմ՝ Հայաստանի Հանրապետութեան Արագածոտն մարզի Ուշան գիլ:
2. Պետք է Ենթադրել, որ Քիրլիս մեկնելուց առաջ Վժանեցին եղել է Եջմիածնի միաբանութեան անդամ, ուր եւ ստացել է արելայի կոչում: Այս վարկածի փաստարկման համար, մեզ չյաջողութեաց յայտնաբերել վաւերական հիմնադրում:
3. **Պապմորին Սուարել Վարդապետի Դարիթեցոյ,** Վաղարշապատ, 1896, էջ 395:
4. **Նոյն,** էջ 395–96:
5. **Նոյն,** էջ 397:
6. **Նոյն տեղում:**
7. **Նոյն,** էջ 398:
8. Սուարել Դարիթեցու պատմութեան մէջ ոչ միայն անտեսուած են Ուկան Երեւանցու կողմից դիտարկուած փաստերը, այլեւ զարգացում է տրամագծօրէն հակառակ տեսակէտ: «Մելքիսէք վարդապետ, – գրում է Դարիթեցին, – ելեալ ի Լայ անապատէն եւ Եկեղի բարձրագահ արռող ի սուրբ Եջմիածնին, եւ երկրպագեաց Քրիստոսակոյն սրբոյ տեղոյն եւ տաճարին, եւ հանդիպեցաւ տեսութեան Սովուս կաթողիկոսին, եւ նորին աշակերտացն, յորոյ զալստեն ուրախութիւն անպատում եղեւ ամենցուն» (Նմոգծումը իմն է – Խ. Ա.): Տես՝ **Պապմորին,** էջ 398:
9. **Գիրք Պապմորինաց,** Շարադրեալ Վարդապետին Սուարելոյ Դարիթեցոյ, Ամստերդամ, 1669, էջ 631:
10. **Նոյն տեղում:**
11. **Պապմորին,** էջ 398:
12. **Նոյն,** էջ 399:
13. Ըստ Ուկան Երեւանցու՝ ինքնակենսագրականում եղած գրառման, Պորփիրի եւ դրան յաջորդող աշխատութիւնների դասաւանդումը Մելքիսէք վարդապետը աւանդել է Եջմիածնում: Տես՝ **Գիրք Պապմորինաց,** էջ 633: Անհաւանական չէ նաև, որ նա այդ ամենը կրկնած լինի Եջմիածնում, նկատի ունենալով նոր աշակերտների մասնակցութիւնը:
14. **Պապմորին,** էջ 398:
15. Դարիթեցին կամխամտածուած շարժառիթով իր աշխատութեան մէջ շրջանցել է Մելքիսէք Վժանեցու Երեւանում ապրած լինելը եւ դպրոցը սկզբում այնտեղ բացելու փաստը: Ինչպէս կը նկատի ընթերցողը, այդ դրուագնները մենք արտաքերել ենք յենուելով Ուկան Երեւանցու ինքնակենսագրականի վրայ: Այս նշանակո՞ւմ է արդեօք, թէ պատմագիրն անտեղեալ է եղել նրա կեանքի պատմութեան այդ իրադարձութեանը: Ոչ ամենեւին... Դարիթեցին ցանկացել է, որ նոր դպրոցի բացման ուրամսեայ պատմութիւնը ամբողջովին կապուած լինի Եջմիածնի անուան հետ, ինը թերեւս ցանկայի է եղել՝ առաջին հերթին հենց Մելքիսէք վարդապետի համար:
16. **Գիրք Պապմորինաց,** էջ 633:
17. Եթէ բացառուի Մելքիսէք վարդապետի և Դարիթեցու մտերմութիւնն ու հանդիպման հաւանականութիւնը (որի մասին փաստարկներ չկան), ապա անբացատրելի կը դառնայ Վժանեցու մասին առկայութիւնը այն փաստառաստ մանրամասների՝ որոնք տեղ են գտնել Դարիթեցու պատմութեան հիթ: գիտում: Պետք է Ենթադրել, որ իր աշխատութեան մէջ Ամիրոյլու վանքի, Ներսէս Սովուսու, Լիմ անապատի եւ Մելքիսէք վարդապետի վերաբերեալ պատումները Դարիթեցին շարադրել է Վժանեցու հաղորդած տեղեկութիւնների հիման վրա: Անուան մատեմագիրը իր **Պապմորինաց** մէջ արտաքրում է այնպիսի ստուգապատում մանրամասներ, որոնք կարող էին իրականացնել միայն ծանօթ լինելու պարագայում: Սուարել Դարիթեցու եւ Մելքիսէք վարդապետի հանդիպումը կարող էր տեղի ունենալ ինչպէս 1630 թուականի

ամուսնութարիզում, երբ գերութեան մէջ գտնուող եղօրորդուն որոնելու նպատակով վերջին գտնում էր Ասրատականում, այսպէս էլ 1631 թուականի աշնանը՝ Եջմիածնում: Հաւանական է թէ՝ մէկը և թէ՝ միսը:

18. **Պատմուրիմ**, էջ 399–400:

19. **Գիրք Պատմուրիկանց**, էջ 633: Պէտք է ենթադրել, որ յաջորդ գլուխների ուսուցումը ընդհատուել է Վժամեցոյ առողջական վիճակի վատրարացման և Երեւան տեղափոխման պատճառով:

20. Դարիթեցու **Պատմուրիկան** աշխարհաբար հրատարակութեան մէջ (Երեւան, 1988, էջ 315) Վժամեցոյ մահը վերագրուած է 1557 թուականին: Մյասլը առաջացել է ճրանից, որ աշխարհաբարի վերածող իրուն բնագիր իհմը է ընդունել Դարիթեցու **Պատմուրիկան** Երրորդ հրատարակութիւնը (1896 թ. Վաղարշապատ), որտեղ Մելքիսէք վարդապետի մահուան թուականը Ո՞Զի փոխարէն տպագրուած է Ո՞Զ տառերով: Այս փրկարակի պատճառով էլ ճրան մահուան թուականը 163 ի փոխարէն թուարկուել է միսավ: Ծիչը տես՝ առաջն հրատարակութեան մէջ, Ամսերդամ, 1669 թ., էջ 393. տես նաև՝ Երկրորդ հրատարակութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 309:

21. Յաւալի է, որ այս ծանրակշիռ գիտելիքների տէր վանական–մտաւորականը՝ Մելքիսէք վարդապետ Վժամեցին տեղ չի գտել **Հայկական Սովորական Համրագիւրասիր** մէջ: Յանձնական է, որ նրան պատշաճ էջ յատկացուի մէր քառահատոր **Համրագիւրապահում**:

22. **Գիրք Պատմուրիկանց**, էջ 633:

23. Պէտք է ափսուել, որ Ռուկան Երեւանցու մասին տպագրուած ուսումնասիրութիւնների եւ յօրուածների մէջ անոշադրութեամբ պատշաճ տեղ չի յատկացուած Մելքիսէք վարդապետի ո՛Ռուկան Երեւանցու ծանօթութեանը, նրանց միջեւ եղած գաղափարական ընդհանրութեանն ու աղերսներին:

24. **Գիրք Պատմուրիկանց**, էջ 631:

25. Նոյն տեղում:

FATHER MELKISET VEJANETSI AND THE STUDY OF
VOSKAN YEREVANTSİ IN EREVAN, IN 1631
(Summary)

KHACHIK SAMUELIAN

Based on data from the historian Arakel Davrijetsi, the author highlights the biography of father Melkiset Vejanetsi assessing his influence on Voskan Yerevantsi, the first publisher of the Armenian Bible. Father Melkiset was born in the late 1570s in the village of Vejan, district of Aragatzoten, state of Ayrarat. He studied in Bitlis in the reknowned monastery of Amirdol, then furthered his education under the auspices of Nerses Mokatsi. After a while Melkiset accompanied Nerses to the tiny island of Lim, which becomes a center for learning and attracted many seeking education. With unabated perseverance, Melkiset delved into learning for ten to twelve years on the island of Lim.

In 1629 Melkiset came to the monastery of Ejmiatzin to contribute to the large-scale reform implemented there. Unfortunately he was not acknowledged as an authority, and was even disregarded. He left for Erevan and established a school there in early 1631.

Father Melkiset's life witnessed a turning point after the representatives of the Catholicosate of Ejmiatzin returned empty handed from their mission in Lvov. There, they were mocked at and proven to be "illiterate". This changed their view of Melkiset Vejanetsi. Now, the clergymen of the Ejmiatzin convent tried to convince the Catholicos to invite Melkiset to reopen his school in the convent. In August 1631 Melkiset reopened his school in Ejmiatzin monastery. Things seemed to look bright, but his health failed and he died in early December 1631.

